

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ**

### **ԱՆՏՈՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՀԱՄԼԵՏԻ**

**ՄԵՂԱՆԻ ԹԵՏԻՍԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ  
ԽԱՆԳԱՐՈՒՄՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ**

**ԺԳ 00.02-Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա  
մասնագիտությամբ (Փիզիկական կուլտուրա) մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ -2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

**Գիտական դեկանար՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռ. Ն. Ազարյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ֆ. Գ. Ղազարյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Յ. Ռ. Սկրտչյան

**Առաջատար կազմակերպություն՝**

Հ. Թումանյանի անվան Վաճաձորի Պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ.-ի հոկտեմբերի 9-ին, ժամը 12-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԴ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Դաստիք՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ.-ի սեպտեմբերի 9-ին

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, մանկավարժական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ա.Ր. ՍՎԱԶՅԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Դետագույնության արդիականությունը:** Տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակությունը համարվում է ուսուցման, դաստիարակության և աշխատանքային գործունեության պատրաստականության անբաժանելի բաղադրիչը: Սակայն այս երեխաների հոգեկան և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները զգալիորեն դժվարեցնում են ֆիզիկական դաստիարակությունը (Լ. Փ. Կասատին, 1980; Բ. Վ. Սերմես, 1983; Պ. Հ. Ազարյան, 1990; Դ. Մ. Մալլաև, 2000 և այլք):

Տեսողական գործառույթի խանգարումը և թույլ տեսողությունը համարվում են ֆիզիկական, շարժողական ոլորտի, տարածության մեջ կողմնորոշման թերզարգացման պատճառ, որը հանգեցնում է շարժումների կոռորդինացիայի, ճշգրտության և ճկունության խանգարումների: Սա բացասաբար է ազդում այդ երեխաների առօրյա կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող գործնական ունակությունների և հնությունների ծեռքբերման գործընթացի վրա և առաջացնում է անձնային մի շարք դրակների ծևավորման խանգարումներ (Մ. Ի. Յանչովա, 1956; Լ. Ի. Սոլոնչևա, 1980; Դ. Մ. Մալլաև, 1995; Պ. Հ. Ազարյան, 2005; Ո. Տ. Սաֆարյան, 2009 և այլք):

Տվյալ իրավիճակը, բնականաբար, մանկավարժներին և հետազոտողներին ստիպում է որոնել այդ հարցերի լուծման արդյունավետ միջոցներ և մեթոդներ: Այնինչ գործնականում կիրավում են առկա ոչ բոլոր հնարավորությունները: Այսպես, թույլ տեսնող երեխաների ունեցած զարգացման խանգարումների շտկման համար նպատակահարուր է կիրառել ֆիզիկական դաստիարակության միջոցներ, այդ թվում՝ սեղանի թենիսը: Սեղանի թենիսի պարապմունքների ժամանակ կատարվող զանազան շարժումների և մեթոդների կիրառումը թույլ է տալիս նպատակառողված կերպով ազդել թույլ տեսնող երեխաների կյանքի համար կարևոր օրգանների և համակարգերի վրա (Եյարդային, մկանային, տեսողական, սիրտ-անոռային, շնչառական և այլն), նպաստում է շարժումների արագության, ճշգրտության, կոռորդինացիայի, ճկունության ծևավորմանը և այլն: Սեղանի թենիսի պարապմունքները նպաստում են նաև երեխայի հոգեկան մի շարք գործառույթների ծևավորմանն ու զարգացմանը՝ ուշադրություն, կամք, (Վստահություն սեփական ուժերի նկատմամբ և այլը):

Սակայն գիտամեթոդական գրականության և տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական դաստիարակության դրվագքի վերլուծությունը վկայում է, որ սեղանի թենիսը գորեք չի օգտագործվում որպես այդ երեխաների ֆիզիկական դաստիարակությանը նպաստող միջոց: Դրա համար էլ թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման մեթոդական մոտեցումների, բովանդակության և հատուկ պայմանների նշակումը, դրանց արդյունավետության փորձարարական հիմնավորումը ֆիզիկական դաստիարակության համակարգում ֆիզիկական նշված վարժությանների համակարգի ներգրավման հիմք է դառնում:

Վերը նշված հանգամանքներով էլ պայմանավորված է մեր հետազոտության արդիականությունը, նրա տեսական, գործնական արժեքն ու սոցիալական նշանակությունը:

**Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:** Տեսողության խանգարումով երեխանների ֆիզիկական դաստիարակության են նվիրված Վ. Ֆ. Աֆանասևի (1971), Բ. Վ. Սերմեկի (1973-1983), Ռ. Ս. Ազարյանի (1974-2014), Դ. Մ. Մալլակի (1985-2000), Ս. Ա. Միջինի (2003-2007), Ռ. Տ. Ս. Սաֆարյանի (2005-2009), Ս.Վ. Մուրադյանի (2010-2014) և այլոց մի շարք աշխատանքներ: Նշված և այլ աշխատություններում բացահայտվում են չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների հետ տարվող մարմնամարզության, թերև աթլետիկայի, լողի, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ առարկայական և արտադասարանական պարապմունքներում շարժախաղերի կիրառման միջոցների կարևորությունն ու արդյունավետությունը: Սակայն մինչև հիմա գիտամեթոդական գործառնության մեջ և գործնականում որոշված չեն թույլ տեսնող երեխանների ֆիզիկական դաստիարակության համակարգում սեղանի թենիսի դերն ու տեղը, տեսականորեն և փորձարարությամբ հիմնավորված չէ ֆիզիկական դաստիարակության առարկայական և արտադասարանական պարապմունքների ժամանակ ֆիզիկական այս վարժության ներառման հնարավորությունն ու նպատակառուղղվածությունը: Մենք հիմնավորել ենք, որ թույլ տեսնող երեխանների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների նախապատրաստման և անցկացման գործընթացի բովանդակությունն է, միջոցները, մեթոդները մշակումը և հատուկ պայմանների ստեղծումը կնպաստեն նրանց առողջության ամրապնդմանը, շարժողական ունակությունների զարգացմանը և բարոյակամային որակների դաստիարակմանը:

**Նետազոտության օբյեկտը** թույլ տեսնող երեխանների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների նախապատրաստման և անցկացման գործընթացն է:

**Նետազոտության առարկան** թույլ տեսնող երեխանների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների նախապատրաստման և անցկացման գործընթացի բովանդակությունն է, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

**Նետազոտության վարկածը:** Մենք ենթադրում ենք, որ թույլ տեսնող դպրոցականների հետ անցկացվող սեղանի թենիսի պարապմունքները կնպաստեն նրանց՝

- առողջության ամրապնդմանը և շարժողական ունակությունների զարգացմանը,
- խնճարված տեսողական գործառույթների (տեսողական ընկալում, տեսողաշարժողական կոռորդինացիա և այլն) շտկմանը, ակտիվացմանը,
- սիրտ-անոթային և շնչառական համակարգերի գործունեության կատարելագործմանը,
- անձնային քարձրարժեք որակների ծնավորման զարգացմանը:

**Նետազոտության նպատակն է՝** մշակել թույլ տեսնող դպրոցականների համար սեղանի թենիսի պարապմունքների նախապատրաստման և անցկացման հատուկ միջոցներ, մեթոդներ, պայմաններ ու փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Նպատակը, օբյեկտը, առարկան և աշխատանքային վարկածը որոշել են հետազոտության Խնդիրները:

- ուսումնասիրել թույլ տեսնող դպրոցականների հետ իրականացվող ֆիզիկական վարժությունների, խաղերի և մարզական պարապմուճների կազմակերպման ու անցկացման ժամանակակից մոտեցումները,
- բացահայտել թույլ տեսնող երեխաների վերաբերմուճը սեղանի թենիսի հանդեպ,
- մշակել թույլ տեսնող երեխաների սեղանի թենիսի պարապմուճների կազմակերպման և անցկացման միջոցներ, մեթոդներ և հատակեցնել դրանց կիրառման մանկավարժական պայմանները,
- փորձարարական ճանապարհով իհմնավորել թույլ տեսնող երեխաների շարժողական ունակությունների, տեսողական, միրտ-անոթային և շնչառական համար սեղանի թենիսի պարապմուճների արդյունավետությունը:

**Դեսազոտության տեսական և մեթոդաբանական իհմք են հանդիսացել անձի զարգացման և ծևավորման գործունեության առաջատար դերի մասին գիտական մկանություններն ու դրույթները (С. Լ. Ռուսիանի, 1973, Դ. Բ. Էլկոնին, 1974, A. H. Լեօնտյես, 1997), գործողությունների և հասկացությունների փուլային ծևավորման տեսությունը (Պ. Յ. Գալյուրին, 1966), ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հայեցակարգային դրույթները (Լ. Պ. Մաթևոս, A. D. Նովիկոս, 1976, Բ. A. Աշմարին, 1978, Ֆ. Գ. Ղազարյան, 1992), տեսողության խանգարումներով երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսությունը (Բ. Վ. Սերմեև, 1987, Լ. Ա. Սեմենով, 1989, Բ. Հ. Ազարյան, 1990, Դ. Մ. Մալլաև, 1997, Վ. Ա. Կրչինին, 2005):**

### **Դեսազոտության մեթոդներն են.**

- հատուկ կրթության վերաբերյալ առկա գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, վերլուծում և տեսական ընդհանրացում,
  - թույլ տեսնող դպրոցականների հետ ֆիզկուլտ-մարզական աշխատանքների դրվագի վերլուծություն,
  - ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կազմակերպող և անցկացնող աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և ընդհանրացում, փորձարկվողների բժշկական փաստաթղթերի վերլուծում,
  - հոգեբանաճանկավարժական և սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ՝ դիտում, հարցում, գրույց, անկետավորում,
  - թիրախային խճիք երեխաների ֆիզիկական պատրաստվածության և շարժողական ունակությունների մակարդակի ստուգողական փորձարկում և թեսքավորում,
  - բժշկական հետազոտության մեթոդներ՝ պուլսումետրիա, սպիրոմետրիա, շնչառության հաճախություն, կենտրոնական և ծայրամասային տեսողության աստիճանի որոշում,
  - մանկավարժական գիտափորձ՝ հավաստիացնող, ուսուցանող,
  - մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:
- Դեսազոտության գիտական նորույթն է**
- բացահայտվել է թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմուճների կազմակերպման և անցկացման վերաբերյալ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների իրագեկվածության և գործնական կարողությունների մակարդակը,

• մշակվել է թույլ տեսնող կրտսեր դպրոցականների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման տեսական մոտեցումները և գործնական ուղիները,

• մշակվել է թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների բովանդակությունը, միջոցները, մեթոդները, մանկավարժական մոտեցումներն ու դրանց կիրառման պայմանները,

• փորձարարությանը հիմնավորվել է սեղանի թենիսի պարապմունքների դրական ազդեցությունը թույլ տեսնող երեխաների շարժողական որոշտի, տեսողության, սիրտ-անորթային և շնչառական համակարգի գործառույթների վրա:

**Նետազոտության տեսական նշանակությունը** որոշվում է թույլ տեսնող կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության դրվագի տեսական վերլուծությամբ, սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման, առաջարկվող մոտեցումների արդյունավետության, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների տեսական հիմնավորմանը:

Նետազոտության նյութերը որոշակիորեն կլրացնեն տեսողության խանգարումնվ երեխաների ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումների տեսությունը և ներողական նոր տեղեկությունները:

**Նետազոտության գործնական նշանակությունը** որոշվում է թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման ու անցկացման օրինակելի ծրագրի, միջոցների, մեթոդների և դրանց կիրառման մանկավարժական պայմանների փորձարարական մշակմամբ և գործնականում ներդրմամբ:

#### **Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները՝**

1. Թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման բովանդակությունը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները:

2. Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքներում առաջարկված մոտեցումների կիրառումը նպաստում է նրանց ֆիզիկական պատրաստվածության և շարժողական ունակությունների զարգացմամբ, տեսողության, սիրտ-անորթային և շնչառական համակարգերի գործառույթների կատարելագործմանը:

#### **Նետազոտությունը կազմակերպվել է 3 փուլերով.**

Առաջին կազմակերպչական-որոնողական փուլում՝ (2005-2006 թթ), անցկացվել է հետազոտվող հիմնախճնդիրի բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն: Երկրորդ փուլում-փորձարարական՝ (2006-2010 թթ) ուսումնասիրվել է թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման վերաբերյալ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների իրազեկվածության և գործնական կարողությունների զարգացման մակարդակները, թիրախային խմբի երեխաների վերաբերմունքը սեղանի թենիսի նկատմամբ, մշակվել են այս պարապմունքների անցկացման տեսական մոտեցումներ և գործնական ուղիներ, հիմնավորված է դրանց դրական ազդեցությունը թույլ տեսնող երեխաների հետազոտվող բոլոր ցուցանիշների վրա: Երրորդ փուլում-ընդհանրացնող՝ (2010-2011 թթ) անցկացվել է

փորձարարական նյութի վիճակագրական մշակում, հետազոտության արդյունքների տեսական վերլուծություն և ընդհանրացում, շարադրվել է ատենախոսությունը:

Հետազոտության գործընթացում ընդգրկվել են 176 տեսողության խանգարումնով 9-11 տարեկան սովորողներ, որոնցից 146-ը՝ հաստատող գիտափորձում և 30-ը՝ ուսուցողականում:

Սոցոլոգիական հետազոտությանը մասնակցել են 87 ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի 128 բարձր կուրսի ուսանողներ:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը** ապահովված են աշխատանքի անցկացման երկարատևությամբ և ծավալով, հետազոտվող երեխաների բավարար քանակով, գիտամեթոդական գրականության բազմակողմանի վերլուծությամբ, հետազոտության ժամանակակից մերողների կիրառմամբ, ինչպես նաև փաստացի նյութի մաքենատիկական մշակմամբ ու դրական վերլուծությամբ: Ատենախոսության տեսական և գործնական դրույթների ստույգությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև հեղինակի հրապարակումներով, 2008-2014քք ընթացքում հետազոտության արդյունքների քննարկումներով և տարբեր գիտական լարաններով ելույթներով:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության տեսական և գործնական դրույթները, արդյունքներն ու հետևողությունները քննարկվել են ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի նիստերում (2008-2011 թթ), Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստերում (2012-2014 թթ), Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներով երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի մանկավարժական խորհուրդներում (2008-2011 թթ):

Աշխատանքի թեմայով հրատարակվել է 5 հոդված:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսական աշխատանքը ներկայացված է 174 համակարգային էջով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության բնագրում ներկայացված է 11 աղյուսակ, 18 նկար, 10 հավելված:

## Աշխատանքի հիմնական բովանդակությունը

**Ներածության մեջ ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական մշանակությունը և պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:**

**Ատենախոսության առաջին՝ «Հիմնախնդրի դրվածքը, խնդիրները, ներողները և հետազոտության կազմակերպումը» գլխում ներկայացված է տեսողության խանգարումնով երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում սեղանի թենիսի թերը. սեղանի թենիսը դիտվում է որպես քույլ տեսնող դպրոցականների կարողությունների և շարժումների**

կարգավորման միջոց, բացահայտվում է հետազոտության ուղղվածությունը, նրա խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը:

Դաստանված է, որ սեղանի թենիսն ունի մեծ հնարավորություն տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության այնպիսի խնդիրների լուծման համար, ինչպիսիք են առողջության ամրապնդումը, ֆիզիկական զարգացումը, ինչպես նաև հիմնական շարժողական ունակությունների, արագության, կողորիհանացիայի, ճշգրտության, ծկունության, տեսողական ընկալման, տարածության մեջ կողմնորոշվելու կարողության կատարելագործմանը և այլն:

Թենիսի պարապմունքները նպաստում են աշխատասիրության, կարգապահության, նպատակաւողվածության, դժվարությունները հաղթահարելու, բնավորության բարոյական և կամային գժերի դաստիարակմանը:

Սակայն գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը և տարբեր տիպի դպրոցներում տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ աշխատանքի դրվածքին ծանոթացումը վկայում է, որ՝

- տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում գրեթե չեն կիրառվում սեղանի թենիսի հնարավորությունները՝ այդ երեխաների առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման և շարժողական ոլորտի խանգարումների շտկման, տեսողական, սիրտ-անորթային և շնչարական համակարգերի գործառույթների զարգացման կատարելագործման համար,

- թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսով պարապելու հնարավորությունների և նպատակաւողվածության տեսական հիմնավորումը, պարապմունքների կազմակերպման և անցկացման միջոցների, մեթոդների ու պայմանների փորձարարական մշակվածությունը կնպաստեն այդ երեխաների դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգում սեղանի թենիսի լայն կիրառմանը:

**Ստենախոսության երկրորդ՝ «Թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կարևորությունը որոշող նախադրյալ ների ուսումնասիրությունը» գլխում ներկայացված են ֆիզիկական կուլտուրայի դպրոցական համալիր ծրագրում սեղանի թենիսի տեղը, թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման հարցում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսեցիների իրազեկվածության մակարդակի արդյունքների վերլուծությունը, տեսողության խանգարումով կրտսեր դպրոցականների սեղանի թենիսի պարապմունքների հանդեպ ֆիզիկական կուլտուրայի և մարզական հետաքրքրությունների ու վերաբերմունքի հետազոտության արդյունքները, տեսողության խանգարումով կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության զարգացման բնութագիրը, ինչպես նաև թույլ տեսնող դպրոցականների հետ իրականացվող սեղանի թենիսի պարապմունքների նպատակաւողվածության և հնարավորությունների տեսական հիմնավորումը:**

Տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական կուլտուրայի ծրագրերի վերլուծությունը փաստում է, որ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման սահմանված ու արտադասարանային-մասնախմբային աշխատանքների միասնական փոխկապակցված համակարգի բացակայությունը, ինչպես նաև այդ պարապմունքների թերի մշակվածությունը հաճեցնում են նրան, որ հատուկ, ներառական և հանրակրթական դարոցներում, նշված աշխատանքը կամ ընդհանրապես չի իրականացվում, կամ էլ իրականացվում է ոչ հաճախակի, այն էլ միայն ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի անձնական փորձի և գիտելիքների հիմնա վրա:

Սոցիացման արդյունքները վկայում են, որ ֆիզիկական կուլտուրայի 87 ուսուցիչներից 66.7 %-ը և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի 128 բարձր կուրսեցիներից 20.3%-ը նշել է, որ մի շարք ֆիզիկական վարժությունների մեջ սեղանի թենիսը պետք է գրավի կարևոր տեղ: Ըստ որում՝ հարցվածների մի մասը ոժվարացել է գնահատել հրավիճակը, պարզապես ընդգծել է այդ պարապմունքների ցածր արդյունավետությունը: Նետազոտությունների արդյունքները բացահայտվեց վերլուծության շնորհիվ, հարցման մասնակիցների՝ հարցվողների գործնական հմտությունների և հատուկ գիտելիքների բավականին ցածր մակարդակ՝ տեսողության խանգարումով երեխաներին սեղանի թենիսի պարապմունքների խնձերի համարման, հատուկ վարժությունների, հանձնարարությունների և խաղերի ընդգրկման, այդ պարապմունքների կազմակերպման և անցկացման, տեսողության հոգնածության վերացման վերաբերյալ բավականին ցածր մակարդակով:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 75.9 %-ը և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի բարձր կուրսեցիների 81.2 %-ը դիտարկվող խնդրի վերաբերյալ չուներ համապատասխան տեսական գիտելիքներ և գործնոկն կառողություններ: Յարցմանը մասնակիցների մեջ մասն անկեղծորեն նշել էր իր անբավարար մասնագիտական պատրաստվածությունը թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքներն անցկացման ոլորտում: Քիմնական պատճառների մեջ նրանք առանձնացրել էին թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման մերոդական մշակումների և մանկավարժական մոտեցումների բացակայությունը:

Անցկացված հետազոտության արդյունքները միաժամանակ ցույց են տվել, որ տեսողության խանգարումով երեխաների ֆիզիկական և մարզական հետաքրքրությունները պայմանավորված են մի կողմից օբյեկտիվ գործնոներով և իրենց՝ այս կամ այլ շարժողական գործնության իրականացման հնարավորություններով, մյուս կողմից՝ նշված ուղղությամբ ֆիզիկական դաստիարակության համակարգում սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման մերոդական մշակումների և մանկավարժական մոտեցումների բացակայությունը:

Տեսողության խանգարումով կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակի ուսումնասիրության վերաբերյալ հատուկ գիտամեթոդական գրականության

Վերլուծությունը (Վ. Փ. Աֆանասև, 1971; Բ. Հ. Ազարյան, 1974, 1990; Լ. Փ. Կասատկին, 1983; Դ. Մ. Մալլաև, 1995; Ռ. Ս. Սաֆարյան, 2009 և այլք) վկայում է, որ մանկական տարիքում տեսողական գործառույթի իջեցումը դանդաղեցնում է ֆիզիկական զարգացման բնականոն ընթացքը՝ հանգեցնելով զարգացման երկրորդական և շարժողական ոլորտի խանգարումների և այլն:

Նշված բոլոր հանգամանքներն էապես իջեցնում են տեսողության խանգարումնով երեխաների հնարավլորությունները, կարողությունները և հմտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն ինքնուրույն կյանքի և աշխատանքային գործունեության կազմակերպման գործում: Մեկ այլ տեսանկյունից՝ մարմնամարզության, աթլետիկայի, ակրոբատիկայի և այլ վարժությունների կատարման դժվարությունները խոչընդոտում են չտեսնողներին և թույլ տեսնողներին ֆիզիկական կուլտուրայի դասերին և արտադասարանական ինքնուրույն պարապմունքների ժամանակ դրանց կիրառմանը: Այդ պատճառով նշված երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման համար անհրաժեշտ արդյունավետ և հասանելի միջոցների որոնումը այսօր շատ արդիական է և գործնականորեն կարևոր:

Վերոնշյալ դրույթները հիմք դարձան թույլ տեսնող երեխաների հետ սեղամի թենիսի պարապմունքների հնարավլորությունների և նպատակառության տեսական հիմնավորման մշակման համար:

Այս գործնթացում անհրաժեշտ մանկավարժական մոտեցումը ենթադրում է թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող սեղամի թենիսի պարապմունքների անցկացման և կազմակերպման սկզբունքների, բովանդակության ուղիների մշակումը՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական դրույթները՝

• դիտարկվող թիրախսային խմբի երեխաների կիմիկական կարգավիճակի, տեսողության խանգարման աստիճամի և բնույթի, երկրորդային շեղումների հաշվառում,

• ֆիզիկական զարգացման և շարժողական ոլորտի զարգացման խանգարումների շուկման համար սեղամի թենիսի միջոցների հիմնավորված ընտրություն և համակարգում, շարժողական գործողությունների կատարման կարողությունների և հմտությունների ծևակվորում,

• սեղամի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ հատուկ մանկավարժական պայմանների ստեղծում լուսավորվածություն, սեղամի տեղադրություն, տեխնիկական միջոցների և հատուկ սարքերի կիրառում, ծայնային կողմնորոշչներ, լրացուցիչ և ուղղորդող վարժությունների համակարգի ընդլայնում,

• նշված խմբի երեխաների որոշ տեսողական գործառությունների զարգացման և կատարելագործման մեթոդական հնարների, հանձնարարությունների, վարժությունների ընտրություն, վերամշակում և համակարգում (տեսողական ընկալում, տեսողական հակագրումների արագություն, տեսադաշտի ընդլայնում), ինչպես նաև նրանց տեսաշարժողական կոռորդինացիայի և մկանաշարժողական գգայության զարգացում:

**Երրորդ՝ «Թույլ տեսնող դպրոցականների հետ անցկացվող սեղամի թենիսի պարապմունքների արդյունավետության փորձարարական հիմնավորումը»**

գլխում ներկայացված են թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թեմիսի պարապմունքների տեսական մոտեցումները և գործնական ուղիները, բացահայտված են այդ երեխաների ֆիզիկական զարգացման, շարժողական ոլորտի խանգարումների, տեսողության, սիրտ-անոթային և շնչառական համակարգերի շտկողական պարապմունքների հետազոտության արդյունքները:

Թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թեմիսի պարապմունքի ընթացքում մենք հաշվի ենք առել հետևյալ տեսական մոտեցումները և գործնական ուղիները՝

- պարապմունքները պետք է ունենան շտկողական ուղղվածություն, բովանդակությանը համապատասխան վարժությունների ընտրություն, ինչպես նաև սովորողների ծանրաբեռնվածության, հանգստի կազմակերպման գործընթացի նկատմամբ՝ անհատական մոտեցում,

- սեղանի թեմիսի պարապմունքներն անցկացնել պարտադիր՝ հաշվի առնելով սովորողների տեսողության խանգարման բնույթն ու աստիճանը, ինչպես նաև՝ զարգացման երկրորդական խանգարումները,

- սեղանի թեմիսի տարրերի գործնական յուրացման ընթացքում լայնորեն կիրառել ընդհանուր զարգացնող, նախապատրաստող և մոտեցնող վարժություններ, ձայնային կողմնորոշչներ, տեխնիկական միջոցներ և հատուկ հարմարանքներ,

- թույլ տեսնող երեխաների հետ կազմակերպվող սեղանի թեմիսի գործնական բաղադրիչների և խաղերի ոյլուրին յուրացմանը նպաստող հատուկ վարժությունների, առաջադրանքների, խաղային իրավիճակների և դրանց կիրառման պայմանների ընտրություն, մշակում և համակարգում:

Այս մոտեցումների հաշվառումով մշակվել են թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թեմիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման բովանդակությունը, ձևերը և մեթոդները:

Երկայնյա մանկավարժական փորձարարության տարրեր փուլերում փորձարարական խմբի երեխաների հետ անցկացվել են ֆիզիկական զարգացման և շարժողական ոլորտի խանգարումների, տեսողա-շարժողական կոռորդինացիայի, շարժումների ճշգրտության, ճկունության, առարկաների, շարժվող օբյեկտների, գործողությունների տեսողական ընկալման հնարավորությունների շտկման ուղղությամբ համակարգված աշխատանքներ: Պարապմունքների հիմնական ծրագրի կարևոր բաղադրիչներից են եղել տարարնույթ վարժությունները, առաջադրանքները և գնդակով խաղերը, սեղանի թեմիսի խաղի տարրերի և տեխնիկայի ուսուցման խնդիրները: Մանկավարժական գիտափորձի երկրորդ տարվա վերջում փորձարկվողները նախապատրաստվել են մրցումներին և մասնակցել դրանց:

Պարապողների համար ստեղծվել են հատուկ պայմաններ՝ խաղահրապարակի արդյունավետ լուսավորություն, պարապմունքների տեսի և սեղանի տեղադրման հետ նախնական ժանոթացում, կողմնորոշման և տեղաշարժման անվտանգության կանոնների ուսուցում, հատուկ մեթոդների կիրառում ընդհանուր զարգացող, նախապատրաստող և մոտեցնող վարժությունների, ձայնային կողմնորոշչների, տեխնիկական միջոցների և հարմարանքների կիրառում, բարի նշանակության ըմբռնման, ուղղորդման, կարգավորման և շտկման դերի ուժեղացում:

Փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրել է այն եղրակացության, որ երկայնյա մանկավարժական փորձարարության ընթացքում թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման մեր կողմից առաջարկվող միջոցները, մեթոդները և դրանց կիրառման հատուկ պայմանները նպաստում են ուսումնասիրվող բոլոր ցուցանիշների զարգացմանը:

Աղյուսակից երևում է, որ մինչ փորձարարությունը, եթե 30 մ վագրի փորձարարական խմբի երեխաների արագությունը, ցատկ տեղից երկայնքով, թույլ է կերև և 5 վրկ-ում շարժումների հաճախականությունը կազմել է միջինում 8.2 վրկ, 96.5 սմ, 14.7 սմ և 12 շարժում, ապա առաջին տարվա վերջում պարապմունքի արդյունքները բարելավվել են համապատասխանաբար՝ 17.0, 22.2, 44.2, 33.3 %: Փորձարարական աշխատանքների վերջում ավելի են աճել, մինչ դեռ ստուգողական խմբում մնացել են գրեթե մինչ փորձարարության սահմանի վրա (աղյուսակ 1):

### Աղյուսակ 1 Փորձարկման ընթացքում թույլ տեսնող երեխաների շարժողական պատրաստվածության ցուցանիշների շարժընթացը

Ցուցանիշ ները	Ցատկ վերև (սմ)		Շեռացատկ (սմ)		Շարժումների հաճախական- ությունը 5 վրկ-ում		Վագր 30 մ (վրկ)	
	Պարա- պողները n=14	Չպարա- պողները n=16	Պարա- պողները n=14	Չպարա- պողները n=16	Պարա- պողները n=14	Չպարա- պողները n=16	Պարա- պողները n=14	Չպարա- պողները n=16
Մինչ գիտ.	14.7	14.8	96.5	97.0	12	12	8.2	8.1
6 ամսի անց	17.8	16.3	103.0	100.6	13	12	7.4	7.8
Տարբերու թյունը	3.1	1.5	6.5	3.6	1	--	0.8	0.3
%	21.1	10.1	6.7	3.7	8.3	--	9.7	3.7
1 տարի անց	21.2	17.6	118.0	103.5	16	13	6.8	7.4
Տարբերու թյունը	6.5	2.8	21.5	6.5	4	1	1.4	0.7
%	44.2	18.9	22.2	6.7	33.3	8.3	17.0	8.6
2 տարի անց	27.7	20.2	131.4	109.4	20	15	6.3	7.2
Տարբերու թյունը	13.0	5.4	34.9	12.4	8	3	1.9	0.9
%	88.4	36.5	36.1	12.8	66.7	25.0	23.2	11.1

Այսպես, ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշները, համեմատած մինչ գիտափորձի տվյալների հետ, բարելավվել են (հասակը, քաշը, դինամիմետրիան, սպիրոմետրիան):

Փորձարարական խմբում համանման արդյունքներ ստացվել են նաև շարժողական ունակությունների ցուցանիշներում՝ շարժումների կոռորդինացիա և ճշգրտություն, հավասարակշռության պահպանում: Այսպես, մանկավարժական փորձարարությամբ վերջում շարժողական ունակությունների ցուցանիշներն աճել են մինչև 64.3, 63.0 և 52.7 %, իսկ ստուգողական խմբում փոփոխությունները քիչ են արտահայտված:


Սեղանի թենիսով զբաղվող թույլ տեսնող երեխաների ֆիզիկական պատրաստվածության և շարժողական ունակությունների բարելավվումը նպաստել է խաղի կառուցվածքային բաղադրիչների և տեխնիկայի յուրացմանը, որն էլ նրանց հնարավորություն տվեց մասնակցելու սեղանի թենիսի մրցումներին:

Անցկացված հետազոտության արդյունքները վկայում են նաև թույլ տեսնող երեխաների տեսողության վիճակի սիրտ-անորթային և շնչառական համակարգերի վրա սեղանի թենիսի պարապմունքների անցկացման առաջարկվող մոտեցումների և բուվանդակության դրական ազդեցության նասին: Դաստատված է, որ Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներով երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի աչքի բժիշկի եզրակացության համաձայն L. Նուշիկյանը երկանյա մանկավարժական փորձարարության ժամանակ հետազոտվող 2 խնձերում կենտրոնական տեսողության սրության և տեսողական գործառույթի ցուցանիշների բացասական փոփոխություններ չի նշել: Փորձարարական խմբի 14 փորձարկվողներից 10-ի (71.3%) կենտրոնական տեսողության սրությունը մանկավարժական փորձարարության ժամանակ չի փոխվել, նշվել է նրա կայուն բնույթը, իսկ 4-ի (28.7%) դեպքում նկատվել է աննշան դրական փոփոխություն (մինչև 0.02 միավոր): Թույլ տեսնող 5 (35.7%) երեխաների ծայրամասային տեսողության ցուցանիշների աննշան բարելավում է եղել, իսկ 11-ի մոտ մնացել է անփոփոխ:


Սեղանի թենիսի պարապմունքները դրական ազդեցություն են ունենում թույլ տեսնող երեխաների տեսողական գործառույթի զարգացման վրա՝ տեսողական ընկալում, տեսողական տեղեկատվություն ստանալու արագության զարգացում, տեսողաշարժողական կոռորդինացիա, ձեռքի շարժումների և աչքերի փոփոխամածայնություն (գծապատկեր 1):

Դրա մասին են վկայում մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում փորձարկվողների կատարած ստուգողական աշխատանքների արդյունքները: Զօալիորեն բարելավվել են նաև փորձարարական խմբի սովորողների սիրտ-անորթային և շնչառական համակարգերի գործառության հնարավորությունները:

Այսպես, սեղանի թենիսի վեցամյա պարապմունքներից հետո սովորողների սրտի զարկերի կրծատման հաճախականությունը չափանշված գործառության փորձից հետո (20 կրծանիստ՝ 30 վրկ-ում) մեծացել է մինչև րոպեում 52.5 (57.8 %) հարված, իսկ 1 տարի հետո՝ 48.5 (53.3 %) զարկ, վերջում՝ 37.5, որը ելքային տվյալների հետ համեմատած՝ 20%-ով քիչ է: Ստուգողական խմբի փորձարկողների նույն ֆիզիկական ծանրաթերևնվածության ժամանակ օրգանիզմի պատասխան հակագրումը ավելի արտահայտված էր:



Մինչև գիտափորձը




Գիտափորձից հետո

#### **ԳԸ.1. Տեսաշարժողական կոռորդինացիայի փոփոխությունները մանկավարժական փորձարարության ընթացքում**

Երկամյա մանկավարժական փորձարարության ընթացքում փորձարարական խմբի թույլ տեսնող երեխաների մոտ նկատվել են դրական փոփոխություններ՝ նաև շնչառության ցուցանիշներում: Այսպէս, եթե մինչ փորձարարությունը ֆիզիկական չափանշված ծանրաբեռնումից հետո շնչառության հաճախականությունը կազմում էր րոպեում 31.5 շունչ, ապա 2 տարի սեղանի թենիսով պարապելուց հետո այն կրճատվել է րոպեում 25.8 շունչ, այսինքն՝ միջինում կազմել է 5.7 շունչ: Սոուլգողական խմբում այս ցուցանիշները մնացել են գրեթե մինչ փորձարարության մակարդակի վրա:

Փորձարարության շրջանում դրական փոփոխություններ նկատվել են նաև փորձարկվողների զարկերակային ճնշման ցուցանիշներում (գծապատկեր 2):

Այսպէս, եթե մինչ փորձարարությունը չափանշված ֆիզիկական ծանրաբեռնումից հետո թույլ տեսնողների արյան առավելագույն ճնշումը միջինում հասել է 28.1 մմ սնդ.սյ. (30.5%), ապա 1 տարվա պարապմունքներից հետո այդ փոփոխությունները կազմել են 21.8 մմ սնդ.սյ., իսկ երկամյա պարապմունքներից հետո այն հասել է 11.8 մմ սնդ.սյ.: Փորձարարության վերջում չափանշված ֆիզիկական ծանրաբեռնումից հետո փորձարարական խմբի երեխաների արյան նվազագույն ճնշման իջեցումը ավելի բարենպաստ էր, քան սոուլգողական խմբի տարեկիցներինը:



## Գծ.2. Մանկավարժական փորձարարության տարրեր փուլերում չափանշված ֆիզիկական ժանրաբեռնումից առաջ և հետո գարկերակային առավելագույն ճնշման ցուցանիշների փոփոխությունը

Չափանշված ֆիզիկական բեռնումից հետո սովորողների սիրտ-անոթային և շնչառական համակարգերի ցուցանիշների վերականգնման ժամանակը վերլուծելով՝ ակնհայտ դարձավ, որ փորձարարական խմբի թույլ տեսնողների՝ այդ ցուցանիշների անցման ժամանակը ելքային մեծության հետ համեմատած բավականին կրճատվել է:

Այսպես, եթե մինչ մանկավարժական փորձարարությունը երեխաների սիրտ-անոթային և շնչառական համակարգերի ուսումնասիրվող ցուցանիշները ֆունկցիոնալ փորձից հետո վերարձել են ելքային մեծության (միջնում 5-6 րոպեում), ապա մանկավարժական փորձարարության վերջում դրանք հասել են 3-4.5 րոպեի սահմանին: Սա ևս վկայում է փորձարարական խմբի թույլ տեսնող երեխաների սիրտ-անոթային և շնչառական համակարգերի լավ հարմարեցումը ֆիզիկական ժանրաբեռնվածությամբ:

Այսպիսով, կարելի է հավաստիացնել, որ սեղանի թեմիսով պարապմունքների համար առաջարկվող մոտեցումները թույլ տեսնող երեխաների ֆիզիկական պատրաստվածության և շարժողական ունակությունների զարգացման, տեսողական գործառույթի, սիրտ-անոթային և շնչառական համակարգերի կատարելագործման հարցում ունեն դրական ազդեցություն: Սա հաստատում է թիրախային խմբի երեխաների հետ կազմակերպվող սեղանի թեմիսի պարապմունքների ընձեռած հնարավորությունները և արդյունավետությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տվյալ իիմնախնդրի հետազոտումը, մշակումը և հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ հետևողական գործությունները

1. Սեղանի թենիսը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց է, սակայն այն թույլ տեսնողների հետ իրականացվող մարդողական աշխատանքում դեռևս լայն կիրառում չունի: Այս հաճախանքը պայմանավորված է ոչ միայն երեխանների տեսողության խանգարմամբ, իսակի ընթացքում կողմնորոշման դժվարություններով, շարժողական պատրաստվածության ցածր մակարդակով, այլ նաև այս հիմնախնդրի անբավարար ուսումնասիրվածությամբ ու ներողական համակարգի չմշակվածությամբ:

2. Սոցիոլոգիական հետազոտմամբ հաստատված է, որ հարցմանը մասնակից ֆիզիկական կուտուրայի ուսուցիչների և ֆիզիկական կուտուրայի ինստիտուտի բազմ կուրսեցինների գերակշիր մեծանանությունը սեղանի թենիսը համարում են տեսողության խանգարումներով երեխանների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց: Միաժամանակ նրանց 84.7%-ը անկեղծորեն նշել են դպրոցներում այս աշխատանքի անբավարար դրվագքի մասին, ինչպես նաև իրենց պատրաստականության ցածր մակարդակը այդ ոլորտում աշխատելու իմաստով: Յարցման մասնակիցները իրենք այս երևույթի հիմնական պատճառ նշում էին այս երեխանների զարգացման առանձնահատկությունների մասին անբավարար տեղեկատվությունը, հասուլ գրականության բացակայությունը, տվյալ համակազմի հետ նշված ուղղությամբ պարապմունքների կազմակերպման և անցկացման համար ուսուցիչներին օգնող ներողական նշակումների և պրակտիկ առաջարկների բացակայությունը:

3. Հիմնավորել ենք, որ թույլ տեսնող դպրոցականների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման տեսական, գործնական նոտեցումների նշակաված լինելը, սեղանի թենիսի միջոցների նշանակության մասին տեղեկացվածության ցածր մակարդակը հանգեցնում է նրան, որ սեղանի թենիսը չի մտնում տեսողության խանգարումներով երեխանների ֆիզկուլտ-սպորտային հետաքրքրությունների ոլորտի մեջ: Այնինչ տվյալ համակազմի հետ սեղանի թենիսի պարապմունքների համար անհրաժեշտ միջոցների, մերողների և պայմանների նշակումը կնպաստի նրանց տեսողական գործառույթների, տեսա-շարժողական կոռորդինացիայի, շարժումների ճշգրտության և տարածական կողմնորոշման ճարպկության զարգացմանը, շարժողական ոլորտի զարգացման շեղումների շտկմանը:

Աստեղախոսության մեջ ներկայացված են նշված խնդիրների լուծման տեսական և գործնական տեսանկյունները:

4. Հաստատված է, որ թույլ տեսնող երեխանների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման որոշակի պայման է համարվում նպատակառության շտկողա-զարգացնող ուսուցումը, որն իրականանում է հասուլ ստեղծված պայմաններում՝

- սեղանի թենիսի խաղասեղանի և խաղային հրապարակի մակերեսների լուսավորության, սպորտային հրապարակում տեղաշարժման անվտանգության և վարքի կանոնների, ֆիզիկական վարժությունների կատարման ձևաչափերի պահպանում,

• շարժողական ոլորտի, շարժումների ճարպկության, կոռորդինացիայի, ճշգրտության և միկրո ու մակրո տարածության մեջ կողմնորոշում,

• տեսողական և լոտղական ընկալման, տեսա-շարժողական կոռորդինացիայի, մկանա-շարժողական զգայությունների զարգացում և ձեռքերի ու աչքի շարժումների համաձայնեցում,

• գնդակով կատարվող գործողությունների հատուկ ուսուցում, գետնից, պատից, սեղամից թրչող գնդակով տարրեր գործողություններ կատարելու հնարների և փոխանցման ճշգրտության կարողությունների և հմտությունների ձևավորում,

• սեղամի թենիսի առանձին տարրերի յուրացում՝ իհմք ընդունելով երեխանների տեսողական հնարավլորությունները. կարողանալ կողմնորոշվել լսողությամբ, մկանա-շարժողական զգայություն և տեսա-շարժողական կոռորդինացիա,

• մեթոդական հնարների, օժանդ հարմարանքների, նախապատրաստող վարժությունների լայն կիրառում, որոնք տեսողության խանգարումներով երեխանների կոռորդինացիայի, շարժումների ճշգրտության, տեսողական ընկալման և սեղամի թենիսի տարրերի յուրացումը դարձնում են ոյուրին:

5. Վերը նշված բոլոր ուղղություններով ընտրվել մշակվել և համակարգվել է թույլ տեսնող երեխանների հետ սեղամի թենիսի պարապմունքների համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների զարգացմանը նպաստող վարժությունների, առաջադրանքների, խաղերի և դրանց մեթոդական ճիշտ կիրառմանը նպաստող ուսումնական համալիր: Ասենախոսության մեջ հիմնավորված են դրանց կիրառման լայն հնարավլորությունները:

6. Երկամյա մանկավարժական գիտափորձով մշակված և առաջարկվող միջոցների, մեթոդների ու սեղամի թենիսի պարապմունքների ժամանակ դրանց կիրառումը տեսողության խանգարումներով երեխաններին ընձեռում են դրական արդյունքների հասնելու հնարավլորություն.

• Ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշները (ուժ, արագություն, ուժային որովակներ) գիտափորձի նախնական տվյալների համեմատությամբ միջինում աճել են 58.6%-ով:

• Թույլ տեսնող երեխանների 64.3 և 63.1%-ն անխալ կատարեցին շարժումների կոռորդինացիայի և ճշգրտության փորձարարական խմբի վարժություններն ու հանձնարարությունները:

• Բժիշկ օֆտալմոլոգի եղանակությամբ՝ սեղամի թենիսի պարապմունքների ընթացքում մասնակիցների կենտրոնական և ծայրամասային տեսողության սրությունը հաստատում է դարձել, փորձարկվողներից 5-ի (35.7%) դեպքում նշվում է տեսադաշտի անճամա լայնացում, իսկ աչքի հատուկը և ներակնային ճնշումը գտնվում էր նորմայի սահմաններում:

• Հետազոտվողների գերակշիռ մեծամասնության մեջ 60.6%-ով լավացել են տեսողական գործառույթների ցուցանիշները՝ տեսողական ընկալում, տեսողական տեղեկատվության արագ ստացում, տեսա-շարժողական կոռորդինացիա, ձեռքերի և աչքերի համաձայնեցված շարժում:

• Դրական առաջնօրաց է արձանագրվել սիրտ-ամոթային և շնչառական համակարգերի գործառության վիճակում 21.0 և 18.1%-ով կրծատվել է սրտի զարկերի և շնչառության հաճախականությունը ստանդարտ ֆիզիկական

բեռնվածությունից հետո, 13.1 և 18.6%-ով քչացել է արյան ճնշման առավելագույն բարձրացում և նվազագույն իջեցում:

7. Անցկացված հետազոտության արդյունքները վկայում են թույլ տեսնող երեխաների հետ սեղանի թենիսի պարապմունքների կազմակերպման և անցկացման համար առաջարկվող մոտեցումների արդյունավետության, շարժողական ոլորտի խանգարումների շտկման ժամանակ դրանց մեջ դերի, շարժումների ճշգրտության և ճարպկության, կորորդինացիայի օպերացման, տեսողական, սիրտ-անորթային, շնչառական համակարգերի գործառույթների կատարելագործման մասին:

**Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.**

1. Անտոնյան Գ.Յ. Սեղանի թենիսի պարապմունքները որպես երեխաների տեսողական գործառույթների զարգացման կարևոր միջոց //Միջընդհական գիտամեթոդական հոդվածների ժողովածու. Դասուկ մանկավարժություն և հոգեբանություն.Երևան, 2008, N7, էջ 4-7

2. Անտոնյան Գ.Յ. Սեղանի թենիսի պարապմունքների ազդեցությունը թույլ տեսնող երեխաների տեսողության վրա. Մանկավարժական նիտք 2010, N 3-4, էջ 240-246

3. Անտոնյան Գ.Ր., Ազարյան Ռ. Ի. Влияние занятый настольным теннисом на функциональное состояние сердечно-сосудистой и дыхательной систем слабовидящих детей //Дефектология, 2011, N1 стр.29-34

4. Անտոնյան Գ. Գ. Настольный теннис в системе физического воспитания детей с нарушениями зрения// Межвуз. сборник научных статей Специальная педагогика и психология, Ереван, 2009, N 8 с., 134-136

5. Անտոնյան Գ. Յ. Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման մոտեցումները ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ընթացքում: Դանրապետական XXXIX գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2009, N 8, էջ. 134-136

**Антонян Гаяне Гамлетовна**

**Настольный теннис как важное средство физического воспитания детей с нарушением зрения**

**Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – Методика преподавания и воспитания (Физическая культура)**

**Защита состоится 9 октября 2014г. В 12<sup>00</sup> часов на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу:375010, Ереван, ул. Тигран Меца 17**

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования.** Известно, что в силу особенностей психического и физического развития детей с нарушением зрения их физическое воспитание имеет свою специфику. Поскольку потеря зрения или слабовидение приводит к нарушению физического развития, двигательной сферы, ориентировке в пространстве, возникновению недостатков в формировании некоторых личностных качеств и эмоционально-волевой сферы.

Для коррекции этих нарушений и всестороннего развития слабовидящих детей в общей системе физического воспитания широко используются средства гимнастики, атлетики, плавания, подвижных игр. Однако до настоящего времени в научно-методической литературе и на практике не определена роль и место настольного тенниса в системе физического воспитания слабовидящих школьников, теоретически и практически не обоснована возможность и целесообразность занятий этими видами физических упражнений, не изучено влияние этих занятий на развитие двигательных способностей, совершенствование двигательных функций, сердечно-сосудистой и дыхательной системы организма слабовидящих детей. Поэтому разработка средств, методов, педагогических подходов и специальных условий для организации и проведения занятий по настольному теннису со слабовидящими младшими школьниками будет способствовать совершенствованию их физического воспитания. Это и определяет проблему исследования как весьма актуальную, имеющую теоретическую, практическую и социальную значимость.

**Цель исследования** – разработать средства, методы и специальные условия для организации и проведения занятий по настольному теннису со слабовидящими школьниками.

## **Задачи исследования**

1. Изучить современные подходы к организации и проведению занятий физическими упражнениями, играми и спортом со слабовидящими школьниками.
2. Определить отношение слабовидящих детей к занятиям настольного тенниса.
3. Разработать средства, методы и педагогические условия их применения для организации и проведении занятий настольным теннисом со слабовидящими детьми.
4. Экспериментально обосновать эффективность занятий настольным теннисом на развитие двигательных способностей, зрительных, сердечно-сосудистой и дыхательной системы организма слабовидящих детей.

## **Научная новизна исследования состоит:**

- в выявлении уровня информированности и развития практических умений учителей физической культуры в организации и проведении занятий по настольному теннису со слабовидящими детьми;
- в разработке теоретических аспектов и практических путей построения занятий по настольному теннису со слабовидящими школьниками;
- в разработке содержания, педагогических подходов и специальных условий для проведения занятий по настольному теннису со слабовидящими детьми и экспериментальном обосновании их эффективности.

**Теоретическая значимость** исследования заключается в теоретическом обосновании возможности и целесообразности занятий настольным теннисом со слабовидящими детьми, а также в анализе, обосновании и обобщении полученных результатов исследования.

**Практическая значимость исследования** состоит в экспериментальной разработке и практическом внедрении специальных средств, методов и педагогических подходов для организации и проведении занятий по настольному теннису со слабовидящими детьми.

**Апробация результатов исследования.** Основные положения, результаты и выводы докладывались и обсуждались на научных конференциях, заседаниях кафедры адаптивной физической культуры АрмГИФК (2008-2011 г.г.), кафедры специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абояна (2012-2014 г.г.) и заседании педагогического совета специальной школы для детей с нарушением зрения N 14 г. Еревана (2008-2011 г.г.). По теме диссертации опубликовано 5 статей.

**Структура и объем диссертации.** Диссертационная работа изложена на 174 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 11 таблиц, 18 рисунков и 10 приложений.

**Antonyan Gayane**

## **TABLE TENNIS AS A IMPORTANT TOOL OF PHYSICAL EDUCATION FOR VISUALLY IMPAIRED CHILDREN**

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.0002-  
“Methods of Teaching and Education” (Physical training)

The defense of the thesis will be held at 12 a.m. on 09 october 2014, at the sessions of Special Board 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under Kh.Abovyan Armenian State Pedagogical University, address: 0010, Tigran Mets ave. 17, Yerevan.

### **SUMMARY**

#### **The relevance of the research**

It is known that by the virtue of the peculiarities of mental and physical development of children with visual impairments their physical education has certain specification. Loss of vision or poor vision brings to disorders of physical development, movements, orientation in space and to development of some personal qualities and moral-willing features.

For the correction of the mentioned disorders and comprehensive development of children with visual impairments in the general system of physical education means of gymnastics, athletics, swimming, active games are widely used. However, up to day in the scientific-methodical literature and practice the role and place of table tennis is not defined in the system of physical education of children with poor vision, the possibility and appropriateness of take-up this kind of sport has not theoretically and practically been justified, the influence of these lessons on the development of motor abilities, improvement of visual functions, cardiovascular and respiratory systems of children with visual impairments has not been studied yet. That's why the development of means, methods, pedagogical approaches and special conditions to organize and conduct table tennis lessons for school-children with poor vision will promote the improvement of their physical education. This defines the issue of research as very relevant which has theoretical, practical and social importance.

**The aim of the research** is to develop means, methods and special conditions to organize and conduct lessons of table tennis for school-children with poor vision.

#### **The objectives of the research** are:

1. To study the contemporary approaches to organize and conduct lessons of physical exercises, games and sport with school-children with poor vision.

2. To define the attitude of children with poor vision towards lessons of table tennis.
3. To develop means, methods and pedagogical conditions to use them to organize and to conduct lessons of table tennis with children with poor vision.
4. To experimentally justify the efficiency of lessons of table tennis related to development of motor abilities, visual, cardiovascular and respiratory systems of organism of children with poor vision.

**The scientific novelty of the research** is:

- Identification of the level of awareness and development of practical abilities of teachers of physical training to organize and conduct lessons of table tennis with children with poor vision.
- Development of theoretical aspects and practical ways to build lessons of table tennis with children with poor vision.
- Development of content, pedagogical approaches and special conditions to organize lessons of table tennis with children with poor vision and their experimental justification.

**The theoretical relevance of the research** is the theoretical justification of the possibility and reasonability of lessons of table tennis for children with poor vision, and the analysis, justification and summarizing of the obtained results of the research.

**The practical significance of the research** is the experimental development and practical implementation of the means, methods and pedagogical approaches to organize and conduct lessons of table tennis with children with poor vision.

**Approbation of the result of the research.** The main provisions, results and conclusions have been reported and discussed at academic conferences and meetings of the Chair of Adaptive Physical Training, ASIPhT (2008-2011), Chair of Special Pedagogy and Psychology, Kh.Abovyan ASPU (2012-2014), and at the meeting of pedagogical board of special school for children with visual impairments # 14 in Yerevan (2008-2011). On the dissertation issue 5 articles have been published.

**The structure and volume of the dissertation.** The dissertation is written on 174 pages of computer text and consists of an introduction, three chapters, conclusions, list of literature used and appendix. The text of the dissertation contains 11 tables, 18 pictures and 10 appendices.

A handwritten signature in black ink, appearing to read "Տիգրան Մատևոսյան".



